Փանիկ

Վարչական ղեկավար՝ Գևորգ Սալնազարյան
Հեռ: 093 42 36 66
Մակերես՝ 17.8կմ²
Բնակչություն՝ 3000
Ինդեքս՝ 3026
armen_pet@mail.ru

Փանիկը գտնվում է Հայաստանի Շիրակի մարզում, Արթիկ համայնքի վարչական շրջան է, Արթիկից գտնվում է 5,4 կմ հեռավորության վրա, մարզկենտրոն Գյումրուց՝ 16 կմ հարավ-արևելք, Մանթաշի ձորահովտի և Շիրակի դաշտի միացման վայրում, Մանթաշ գետակի ձախափնյա արգավանդ դաշտում: Բնակչության մեծամասնությունը կաթոլիկ հայեր են:

1812 թվականին Ալաշկերտի Խաստուր գյուղից մի խումբ հայեր վերաբնակվել են Շիրակ գավառի Քավթառլու կոչվող ավերակ բնակավայրում:Փանիկ է վերանվանվել 1925 թվականին:Գյուղը ժամանակին եղել է գրչության կենտրոն:

Գյուղում առաջին դպրոցը հիմնվել է 1859թվականին Պողոս վարդապետ Նահապետյանի և նրա եղբոր՝ Սողոմոն Նահապետյանի ջանքերով:Այն սկզբում ունեցել է 1 ուսուցիչ և 38 աշակերտ: Դպրոցում դասավանդվել են հետևյալ առարկաները՝ կրոն, թվաբանություն, աշխարհագրություն, հայերեն, լատիներեն և ռուսերեն լեզուներ

Գյուղն ունի Մշակույթի տուն, որն ընդգրկված է պատմամշակութային հուշարձանների ցանկում:

Բնակչությունը զբաղվում էդաշտավարությամբ, այգեգործությամբ, մեղվաբուծությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ:

Գյուղում կա գործող կաթոլիկ եկեղեցի, որը կոչվումէ Փանիկի Սուրբ Տիրամայր եկեղեցի (1761-1846 թվականներ):Գյուղից 5 կմ հյուսիս, «Ավերք» կոչվող վայրում, կան անտիկ շրջանի բերդի ավերակներ։

Գյուղում կա նաև թանգարան, որը խորհրդային տարիներին համարվում էր տարածաշրջանում եզակիներից մեկը։ Այն գյուղի դպրոցում հիմնել էր դպրոցի պատմության ուսուցիչ Պետրոս Նահապետյանը։ Այժմ իր գործը շարունակում են։ Գյուղի հարուստ պատմության մասին վկայող փաստեր, նմուշներ են հավաքվում և ցուցադրվում։ Թանգարանի ստեղծման և հնագույն նմուշների ձեռքբերման մասին SHANTNEWS.am-ին պատմել է Պետրոս Նահապետյանի թոռը։ Թանգարանը աշխարհում եզակիներից է, որտեղ ցուցադրվում են նախորդ դարից պահպանվող հացի նմուշներ։

Այնուհետև թանգարանը տեղափոխվում է եկեղեցու հարևանությամբ՝ գիտապատմամշակութային կենտրոն։ Ցուցասրահներում առանձին-առանձին ներկայացված են գյուղի կենցաղն ու զբաղվածությունը։